Շախմատային Հայաստան

№18(285)

ՄԱՅԻՍ, 1998

ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է

Սլովենիայի Բլեդ քաղաքում ընթացավ ՖԻԴԵ-ի գործադիր կոմիտեի նիստը, որի քննարկած հարցերից մի քանիսը անմիջական առնչություն ունեն հայկական շախմատի հետ:

Ուրախալի է, որ ՖԻԴԵ-ն, չսպասելով իր հերթական կոնգրեսին, միջազգային գրոսմայստերի կոչում շնորհեց 18-ամյա երեւանցի Կարեն Ասրյանին:

Հիշեցնենք, որ պատանի շախմատիստը արդեն յոթ անգամ լրացրել էր բարձր տիտղոսի համար սահմանված նորման:

«Շախմատային Հայաստանը» ջերմորեն շնորհավորում է պատանի գրոսմայստերին եւ նրան ցանկանում մարզական ու ստեղծագործական նորանոր նվաճումներ:

Ինչպես հայտնի է, առաջիկա չորս տարիներին Երեւանում անցկացվելու են պաշտոնական խոշորագույն մրցաշարեր: ՖԻԴԵ-ի գործադիր կոմիտեն հաստատեց այդ մրցումների անցկացման կոնկրետ ժամկետները:

Ամենամոտակա մրցաշարը՝ Եվրոպայի մինչեւ 20 տարեկան պատանիների եւ աղջիկների առաջնությունը, Երեւանում կանցկացվի այս տարվա սեպտեմբերի 4-18-ը:

Ապա Հայաստանի մայրաքաղաքը երկու տարի անընդմեջ կհյուրընկալի աշխարհի մինչեւ 20 տարեկան պատանիների եւ աղջիկների առաջնություն-



Կարեն Ասրյան

ների մասնակիցներին: 1999 թվականին այդ մրցաշարը կանցկացվի սեպտեմբերի 16-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը, իսկ 2000 թվականին՝ սեպտեմբերի 17-ից մինչեւ հոկտեմբերի 2-ը:

Վերջապես, Հայաստանում կընթանա երրորդ հազարամյակի անդրանիկ համաշխարհային առաջնությունը. 2001 թվականի հոկտեմբերի 5-15-ը Երեւանում կանցկացվի աշխարհի թիմային առաջնությունը՝ երկրագնդի ուժեղագույն գրոսմայստերների մասնակցությամբ:

Բլեդում Կիրսան Իլյումժինովը վերջնականապես հայտարարեց՝ այս տարեվերջին ԱՄՆ-ի Լաս Վեգաս քաղաքում աշխարհի անհատական առաջնության անցկացման մասին: Հարյուր ուժեղագույն շախմատիստների մասնակցությամբ անցկացվելիք այդ մրցաշարը կմեկնարկի դեկտեմբերի 3-ին կամ 6-ին:

Մրցաշարի կազմը պետք է ճշգրտվի մինչեւ նոյեմբերի 1-ը: Մասնակիցների մի մասը կընտրվի անհատական գործակիցներով: Պետք է ենթադրել, որ նրանց մեջ իր հաստատուն տեղը կունենա Վլադիմիր Հակոբյանը: Լաս Վեգասի մրցաշարի տեղերի մեծ մասը հատկացված է փնջային մրցաշարերին: Հիշեցնենք, որ Հայաստանը մտնում է եվրոպական 5-րդ գոտու մեջ, որում ընդգրկված են նաեւ Հարավսլավիան, Հունաստանը, Վրաստանը, Թուրքիան, Կիպրոսը, Մալթան եւ Ալբանիան: Նախատեսվում է մեր գոտու մրցաշարն անցկացնել համաշխարհային օլիմպիադայից հետո, հոկտեմբերի երկրորդ կեսին: Եթե անցյալում եվրոպական 5-րդ գոտուց աշխարհի առաջնություն էին մեկնում երեք հաղթողներ, ապա այժմ այդ իրավունքը կտրվի չորս լավագույններին:

Աշխարհի առաջնության մի քանի տեղեր հատկացված են ուժեղագույն պատանի շախմատիստներին: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, աշխարհի մինչեւ 20 տարեկանների չեմպիոններին: Այնպես որ, օրինակ, Ասրյանը կարող է փորձել Լաս Վեգասի ուղեգիր նվաճել՝ մասնակցելով մինչ այդ Հնդկաստանում անցկացվելիք աշխարհի պատանեկան առաջնությանը: Բայց բացառված չէ, որ մեր երիտասարդ գրոսմայստերը բաղձալի իրավունքը կստանա ավելի շուտ: «Գաղտնիքն» այն է, որ այն պատանի շախմատիստները, որոնց «էլոն» կհատի 2600-ի սահմանագիծը, ինքնաբերաբար կստանան աշխարհի տղամարդկանց առաջնությանը մասնակցելու իրավունք: Եվ ըստ նախնական հաշվարկների, Կարենի գործակիցը հուլիսի 1-ի դրությամբ կարող է հասնել ցանկալի ցուցանիշի:

Բլեդում Իլյումժինովը հայտարարեց, որ Լաս Վեգասում մրցանակային ընդհանուր գումարը հավասար կլինի 3 միլիոն ամերիկյան դոլարի: ՖԻԴԵ-ի նախագահը այս կապակցությամբ շեշտեց, որ աշխարհի առաջնության ֆինանսական պայմանները փաստորեն 20 տոկոսով բարելավվում են, քանի որ նախկին 5 միլիոնը սահմանված էր երկու տարին մեկ անցկացվող առաջնությունների համար: Իսկ այժմ, քանի որ այդ մրցաշարերը նախատեսվում է անցկացնել ամեն տարի, նույն ժամանակահատվածի համար մրցանակային գումարը կազմում է 6 միլիոն ամերիկյան դոլար:

ՇԱԽՄԱՏԱՍԵՐ ԲԱՐԵԿԱՄ

Մեր պարբերականի այս համարի նյութերը պատմում են Սլովենիայի Բլեդ քաղաքում անցկացված ՖԻԴԵ-ի գործադիր կոմիտեի նիստի, Էլիստայում ավարտին մոտեցող Իլյումժինովի գավաթի խաղարկության մասին: Առաջին հայացքից միանգամայն տարբեր այս իրադարձություններին միավորում է մի ընդհանուր նպատակակետ՝ տարեվերջին ՖԻԴԵ-ի վարկածով անցկացվելիք աշխարհի նոր առաջնությունը, որի մասնակիցների մեջ կլինեն Հայաստանի ուժեղագույն շախմատիստները: